ՀՀ ՊԵՏԱԿԱՆ
ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ
ԿՈՄԻՏԵ

ՈՒՂԵՑՈՒՅՑ

ՀՀ ՍԱՀՄԱՆԸ ՀԱՏՈՂ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՀԱՄԱՐ

Առանց մաքսատուրքերի հարկերի վճարման տեղափոխման ենթակա ապրանքների թույլատրելի չափաքանակների, ինչպես նաև այդ չափաքանակների գերազանցման դեպքում՝ գանձման ենթակա մաքսային վճարների մասին

2024

Ուղեցույցի նպատակն է ներկայացնել՝ առանց մաքսատուրքերի հարկերի վճարման տեղափոխման ենթակա ապրանքների թույլատրելի չափաքանակների, ինչպես նաև այդ չափաքանակների գերազանցման դեպքում՝ գանձման ենթակա մաքսային վճարների մասին տեղեկատվությունը, որին անհրաժեշտ է

ԻՐԱԶԵԿ ԼԻՆԵԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԺԱՄԱՆԵԼԻՍ

Ուշադրություն

Հայաստանի Հանրապետության սահմանով ֆիզիկական անձանց կողմից ապրանքների տեղափոխմանը վերաբերող կարգավորումներին ավելի մանրամասն կարող եք ծանոթանալ այցելելով ՀՀ Պետական եկամուտների կոմիտեի պաշտոնական կայքէջ՝
https://src.am/am/getMenusContents/266:

Հնարավոր է անցում կատարել նաև հետևյալ QR կոդով՝

1. Առանց մաքսային վճարներ վճարելու ֆիզիկական անձանց կողմից ուղեկցող և (կամ) չուղեկցող ուղեբեռով ի՞նչ քանակությամբ ապրանքներ կարող են ներմուծվել Հայաստանի Հանրապետության տարածք.

Ֆիզիկական անձանց կողմից ուղեկցող և (կամ) չուղեկցող ուղեբեռով առանց մաքսային վճարների ՀՀ տարածք կարող են ներմուծվել՝

• Անձնական օգտագործման ապրանքներ (բացառությամբ էթիլ սպիրտի, ալկոհոլային խմիչքների՝ սպիրտի 0.5% ծավալային բաժնից ավելի խտությամբ), որոնք չեն գերազանցում՝ Հայաստանի Հանրապետության ցամաքային սահմանով ուղեկցող և (կամ) չուղեկցվող ուղեբեռով տեղափոխման դեպքում՝ 10կգ-ը և 200 Եվրոյին համարժեք ՀՀ դրամը, իսկ օդային տրանսպորտի դեպքում՝ 50կգ-ը և 10 000 Եվրոյին համարժեք ՀՀ դրամը: Ներառյալ՝ 18 տարին լրացած անձի կողմից տեղափոխվող ծխախոտը, ծխախոտային արտադրատեսակները, ծխախոտ, նիկոտին պարունակող և տաքացման կամ այլ եղանակների օգնությամբ (առանց այրման) ներշնչելու համար նախատեսված արտադրանքը՝ մինչև 200 սիգարետի կամ 50 սիգարի (սիգարելլա) կամ տաքացվող ծխախոտով 200 արտադրատեսակների («ստիկներ») կամ 250 գրամ ծխախոտի կամ 250 գրամից ոչ ավելի ընդհանուր քաշով արտադրատեսակների տեսականին;

- մինչև 3 լիտր ալկոհոլային խմիչքներ՝ սպիրտի 0,5% ծավալային բաժնից ավելի խտությամբ:

Ուշադրություն.

❖ Արգելվում է 5 լիտրից ավելի՝ էթիլ սպիրտի, 0,5 %-ից ավելի սպիրտի պարունակությամբ ալկոհոլային խմիչքների ներմուծումը երրորդ երկրներից, ինչպես նաև այդ ապրանքատեսակների ներմուծումը 18 տարին չլրացած անձանց կողմից;

❖ Սույն կարգավորումների իմաստով՝ «ալկոհոլային խմիչքներ՝ սպիրտի 0,5% ծավալային բաժնից ավելի խտությամբ» հասկացությունը պետք է մեկնաբանել որպես՝ ԵՍՏՄ ԱՏԳ ԱԱ 2203 00 - 2206 00 և 2208 ապրանքային դիրքերում ներառված ալկոհոլային խմիչքներ՝ բացառությամբ էթիլ սպիրտի և կվասի:

2. Առանց մաքսային վճարներ վճարելու ֆիզիկական անձանց կողմից ուղեկցվող և (կամ) չուղեկցվող ուղեբեռով անձնական օգտագործման ապրանքների՝ Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծելու նորմերում ներառվո՞ւմ են արդյոք ՝ ճամփորդության ընթացքում և (կամ) նշանակման վայրում անհրաժեշտ անձնական օգտագործման օգտագործված ապրանքները:

Ֆիզիկական անձի կողմից առանց մաքսային վճարների ներմուծվող անձնական օգտագործման ապրանքների թույլատրելի նորմերում ճամփորդության ընթացքում և (կամ) նշանակման վայրում անհրաժեշտ անձնական օգտագործման օգտագործված ապրանքները **չեն ներառվում**:

3. Որոնք ենք այն չափորոշիչները որոնց համաձայն ապրանքները դիտարկվում են որպես ճամփորդության ընթացքում և (կամ) նշանակման վայրում անհրաժեշտ անձնական օգտագործման օգտագործված ապրանքներ.

Ապրանքների՝ որպես ճամփորդության ընթացքում և (կամ) նշանակման վայրում անհրաժեշտ անձնական օգտագործման օգտագործված ապրանքներ դիտարկելիս հաշվի են առնվում հետևյալ չափորոշիչները՝

- ընթացուղում և (կամ) նշանակման վայրում օգտագործման համընդհանուր ընդունված (ավանդական) փորձը, այդ թվում ՝ հաշվի առնելով սեզոնայնությունը, ուղևորության նպատակը, տրանսպորտի տեսակը, ՀՀ սահմանը հատելու հաճախականությունը;

- մաշվածության (այդ թվում՝ քերծվածքների, փորվածքների, այլ մեխանիկական վնասումների), լվացման, այլ կերպ օգտագործման նշանների առկայությունը;

- հաշվեպիտակների, ապրանքանիշների, պիտակների, առաջնային փաթեթվածքի, այդ թվում՝ առանձին տեղափոխվող հաշվեպիտակների, ապրանքանիշների, պիտակների, առաջնային փաթեթվածքի բացակայությունը՝ բացառությամբ՝ տնտեսապես շահավետ եղանակով սկզբնական վիճակի վերականգնումը բացառող եղանակով վնասված փաթեթվածքի;

- միավոր քանակով կամ այդ ապրանքի օգտագործման համընդհանուր (ավանդական) փորձի համար անհրաժեշտ այլ քանակով ներմուծումը, այդ թվում՝ հաշվի առնելով սեզոնայնությունը, ուղևորության նպատակը, տրանսպորտի տեսակը, ընթացուղում և (կամ) նշանակման վայրում օբյեկտիվ անհրաժեշտությունը:

4. Արդյոք Հայաստանի Հանրապետության ցամաքային սահմանով, ուղեկցող և (կամ) չուղեկցվող ուղեբեռով տեղափոխման դեպքում՝ 10կգ-ը և 200 Եվրոյին համարժեք ՀՀ դրամը, իսկ օդային տրանսպորտի դեպքում՝ 50կգ-ը և 10000 Եվրոյին համարժեք ՀՀ դրամը չգերազանցող բոլոր ապրանքները համարվում են անձնական օգտագործման ապրանքներ և կարող են առանց մաքսատուրքերի հարկերի վճարման ֆիզիկական անձի կողմից տեղափոխվել մաքսային սահմանով.

Համաձայն գործող օրենսդրության՝

Եվրասիական տնտեսական միության մաքսային սահմանով (այսուհետ՝ մաքսային սահմանով) տեղափոխվող ապրանքներն անձնական օգտագործման ապրանքների շարքին դասելն իրականացվում է մաքսային մարմնի կողմից, ելնելով՝

1) Մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքների մասին ֆիզիկական անձի բանավոր կամ գրավոր դիմումից՝ ուղևորային մաքսային հայտարարագրի օգտագործմամբ.

2) ապրանքների բնույթից և քանակից.

3) ֆիզիկական անձի՝ մաքսային սահմանը հատելու և (կամ) այդ ֆիզիկական անձի կողմից կամ նրա հասցեով ապրանքները մաքսային սահմանով տեղափոխելու հաճախականությունից:

Հետևաբար՝

ֆիզիկական անձի մոտ առկա, նշված կարգավորումների համաձայն՝ մաքսային մարմնի կողմից որպես անձնական օգտագործման չդիտարկվող կամ էլ Եվրասիական տնտեսական միության հանձնաժողովի կողմից անձնական օգտագործման ապրանքների շարքին չդասվող ապրանքների կատեգորիաների նկատմամբ ֆիզիկական անձանց անձնական օգտագործման ապրանքների տեղափոխմանը վերաբերող կարգավորումները (այդ թվում ՀՀ սահմանով առանց մաքսատուրքերի հարկերի տեղափոխմանը վերաբերող) կիրառելի չեն և այդ ապրանքները ենթակա են մաքսային սահմանով տեղափոխման՝ Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի մյուս գլուխներով սահմանված կարգով և պայմաններով:

5. Անկախ արժեքից և քաշից առանց մաքսային վճարների ո՞ր ապրանքները կարող են ներմուծվել ՀՀ տարածք.

Անկախ արժեքից և քաշից առանց մաքսային վճարների ներմուծվում են հետևյալ ապրանքները՝

- **կանխիկ դրամական միջոցները և (կամ) դրամական գործիքները.**

- **Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս պարգևատրված անձանց կողմից և (կամ) այդ անձանց հասցեով ցանկացած եղանակով ներմուծվող՝ շքանշանների, մեդալների, գավաթների տեսքով պարգևները՝ այդ պարգևների ստացումը հաստատող փաստաթղթերը ներկայացնելու պայմանով.**

- **Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվելու ժամանակահատվածում օգտագործման համար անհրաժեշտ քանակությամբ՝ ձեռնարկատիրական գործունեության իրականացման հետ կապ չունեցող մասնագիտական գործունեության մեջ՝ Հայաստանի Հանրապետության տարածքում անցկացվող պաշտոնական միջազգային, սպորտային, մշակութային, գիտահետազոտական, կրթական և նման այլ միջոցառումներում մասնակցելու համար Հայաստանի Հանրապետությունում հավատարմագրված ֆիզիկական անձանց կողմից օգտագործվող մարզական գույքը, լուսանկարչական և տեսասարքավորումները, այլ ապրանքները.**

- **Ցանկացած եղանակով ներմուծվող՝ մահացածների մարմիններով (աճյուններով) դագաղներ և աճյունափոշով (մոխրով) աճյունասափորները.**

- **Հայաստանի Հանրապետությունից ժամանակավորապես արտահանված և հետ ներմուծվող ապրանքները՝ պայմանով, որ դրանք մնացել են անփոփոխ, բացի փոխադրման (տրանսպորտային փոխադրման) և (կամ) պահպանման բնականոն պայմաններում բնական մաշվածության հետևանքով տեղի ունեցած, ինչպես նաև բնական կորստի հետևանքով տեղի ունեցած փոփոխություններից, եթե մաքսային մարմնին են ներկայացնում Հայաստանի Հանրապետության տարածքից այդ ապրանքների արտահանման ժամանակ լրացված, մաքսային մարմնի կողմից կատարված նույնականացման վերաբերյալ նշումով ուղևորային մաքսային հայտարարագիրը:**

6. Եվրասիական տնտեսական միության անդամ չհանդիսացող երկրներից ուղեկցվող և կամ չուղեկցվող ուղեբեռով տեղափոխվող անձնական օգտագործման ապրանքների թույլատրելի չափաքանակները գերազանցելու դեպքում որքա՞ն միասնական վճարներ պետք է վճարվեն գերազանցող մասի համար.

Առանց մաքսային վճարների օդային և ցամաքային տրանսպորտով տեղափոխվող ներառյալ հետիոտն ճանապարհով, անձնական օգտագործման ապրանքների թույլատրելի չափաքանակների գերազանցման դեպքում վճարվում են՝

- Ուղեկցվող և (կամ) չուղեկցվող ուղեբեռում՝ օդային կամ ցամաքային տրանսպորտով կամ հետիոտն ճանապարհով (բացառությամբ էթիլ սպիրտի, ալկոհոլային խմիչքների՝ սպիրտի 0.5% ծավալային բաժնից ավելի խտությամբ), գերազանցող մասի համար՝ արժեքից 30%-ի չափով, բայց ոչ պակաս, քան 1 կգ քաշի դիմաց 4 Եվրոյին համարժեք ՀՀ դրամ միասնական վճար:
- Ուղեկցվող և (կամ) չուղեկցվող ուղեբեռով ներմուծվող մինչև 5 լիտրը ներառյալ էթիլ սպիրտի համար գանձվում է միասնական վճար՝ 22 Եվրո 1 լիտրից:
- Ուղեկցվող և (կամ) չուղեկցվող ուղեբեռում ներմուծվող 3 լիտրը գերազանցող, սակայն ոչ ավելի քան 5 լիտր՝ սպիրտի 0,5% ծավալային բաժնից ավելի խտությամբ ալկոհոլային խմիչքների ներմուծման դեպքում՝ 3 լիտրը գերազանցող յուրաքանչյուր լիտրից գանձվում է 10 Եվրո միասնական վճար:

7. Հայաստանի Հանրապետության մաքսային տարածքից արտահանվող ապրանքերի համար արդյո՞ք վճարվում են մաքսատուրքեր.

Անկախ իրենց արժեքից, քաշից և (կամ) քանակից՝ Միության մաքսային տարածքից անձնական օգտագործման ապրանքներն արտահանվում են առանց մաքսատուրքերի վճարման:

Ուշադրություն՝

Ելնելով անձնական օգտագործման ապրանքների կատեգորիայից, Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածք այդ ապրանքները ներմուծող անձից և (կամ) Եվրասիական տնտեսական միության տարածք անձնական օգտագործման այդ ապրանքները ներմուծելու եղանակներից՝ Եվրասիական տնտեսական միության հանձնաժողովը սահմանում է անձնական օգտագործման ապրանքները մաքսատուրքերի, հարկերի վճարումից ազատմամբ Միության մաքսային տարածք ներմուծելու դեպքերը և պայմանները, ինչպես նաև անձնական օգտագործման այդ ապրանքների օգտագործման և (կամ) տնօրինման մասով սահմանափակումները:

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

https://www.facebook.com/petekamutner/

https://www.instagram.com/src_armenia/

https://twitter.com/petekamutner

https://www.src.am/am